կայր բերին զթուղթան Գ, և մարդ ուղարկեցին ի մեր Քեօր աթոռակալն և ձայնեցին զնա և եկն, և զթուղթ մեծ վարդապետին կարդացին, և ասաց թէ Բերեմ, ի տունն է. և գնաց և յուշացաւ, և կրկին մարդ ուղարկեցին ի դուռն և ի ժամն, և ոչ գտին զնա և ըզթըլթըլն. և այլն ամենայն ի ժամն լեալ. և ուղարկեցին մարդ ի Բարսեղն՝ թէ տայցէ զՅարութիւն Չէլէպոյ զթուղթն, և երեր զնա. և կրկին գնացեալ ի ժամս մեր, և ոչ գտին զնոսա անդ, մինչև լուսացաւ (15 Նոյ.)։ Եւ յետ բանիցս ուղարկեցին զմեծ Տէր Յովանէսն Աստուածածնի, զի երթայցէ անդ ի ժամս մեր և կարդայցէ զթուղթ մեծ վարդապետին։ Գնացեալ կարդաց և եկն. և յետ ժամուն տեսաք զի եկն Բարսեղն և նստաւ անդ, և Խաչատուր վարդապետն սկսեալ բազում բանիւք յառաջ բերել զխօսս նորա, և յետ պահու ինչ եկն Քեօրն և Պարմախսուզն և բերին զթուղթ հօրն իմ և ասեն թէ Ասաց Բարսեղն թէ Հէլպէ՛թ կարդացուցէք զթուղթն, և ահա տամ սորա առաջև, և ետուն. և բազում խօսք եղեալ անդ, որ և լուռ լինէր նա։ Եւ չարքն յամօթի հարեալ ի վայր հայէին, և վարդապետքն ի մէջ մտեալ ուղարկեցին զամենեսեան թէ Գնացէ՛ք. և կրկին անդ չարեացն բազում նախատինս և արհամարհանս արարեալ Մարտիրոս վարդապետն և իշխանացն, և ելեալ կորեան ամօթալից։ Եւ գիր գրեցին առ կաթողիկոսն Սբսայ և սայով ուղարկեցին ի յԷրէնէ։ Երեկոյիս Կելիպօլցի Գրիգորն և Թորոսն ի մերն էին։

Կիրակի օրս (16 Նոյ.) անձրև գայր. և մեր եկեժեցոյ չարքն կրկին գան առ Տէր Յովանէսն և կռվին ընդ նմա թէ Տո՛ւր զաջահամբուրն նորա, զի բանադրած է. և անդ գտեալ ի մերայնոցս՝ զնոսա բազումս անարգեալ և կռվեալ ընդ նոսա, լուռ եղեն և ոչ կարացին առնուլ զաջահամբուրքն, զի առաւօտուս թուղթ